

ՏԽՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԵՐ ՈՒ

Կը սիրեմ ես աչքերուդ խոր տխրութիւնն
Աստղերու պէս՝ որոնք արեւ չեն տեսներ,
Կ'ոգեմ գրկել սրտէդ մեկնող ալիքներ
Այնքան նման աշանային գոյներուն:

Կը մերձենայ թերեւս գիշեր մ'անվախճան
Օրերդ անոյշ թանձրը քօղով պատհերու .
Բայց քու հոգիդ նրման խոշոր սատղբու
Պիտի ծագի նոր երկինքի մը վերան:

Սնկէ անդին դուն կը տեսնես անձանօթն
Ս. Դ. քան մեզի խորհրդաւոր և գաղտնի.
Ս. Դ. է մէկ էջն ալ մեր կեանքին հրաշալի,

Գիշերին լիքի՝ տեսնել պայծառ տառաօտ:
Լու մահը միշտ հաշտ է տրտում աչքերուն,
Ինչպէս ըստուերն ուղեւորի քայլերուն:

ՄՐՏԻ ՄՈՒՐԱՅԿԱՆ

Ես եմ սիրոյ մուրացիկ,
Ձեր չէմբուռն ընտանի.
Սերս կը փնտռեմ երջանիկ
Նոր վարդի պէս Մայիսի:

Բացէք ճաղերն տափասկ.
Մտրացկանին հետ յաւէտ
Կը մանէ միշտ արեգակ,
Սէր կը մանէ բերկրաւէտ:

Ո՛հ, մի նայի՛ք իմ խոնարհ
Հանդերձներուս և սրտիս.
Ե՞ս բերած եմ ձեզ համար

Անոյշ արեւն իմ կեանքիս,
Որ ձեր ղոները փարթամ
Կեանքին ըլլան բարեկամ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍԻ
ՄԻԻԹԱՐԵԱՆ ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Մեիրթարեան նոր վարժարանի մը
հաստատութեան շնորհակց լուրը, փայլակի
արագութեամբ տարածուած Պուէնոս Այ-
րէսի մէկ ծայրէն միւսը, անառհման բեր-
կրութեամբ լեցուցած է բոլոր բարեկամնե-
րու և ճշմարիտ հայրենասէրներու սրտերը:

Աւետիսը կը հաղորդէր Հ. Ստեփանն Վրդ. Ֆերահեան, իր զատկական ազնիւ մաղ-
թանքներուն հետ: Վեց տարիէ ի վեր ան-
խոնջ ու լռիկ կ'աշխատէր նա այնտեղ,
հակառակ կարգ մը դժուարութիւններու:
Ու Նախախնամութիւնը, յանձին վեհանձն
բարերարներու, կու գայ վարձատրել այս
ազնիւ մշակին ժիւր ջանքերը, հայ մշակոյթ-
թի ու ցեղային պահպանումի նոր վառա-
րան մը ստեղծելով Ատլանտեանի հեռաւոր
ափերուն վրայ: Պուէնոս Ալբիսի մէջ:

Վարժարանի շէնքին գնման գլխավոր
բարերարն է՝ Տիար Յովհաննէս Տիարպէ-
քիւրեան, Տիար Սանուկ Շիրինեանի և
Տիար Փանոս Էօրնէքեանի հետ։ Վերջին
երկուքը՝ նախկին սաներ Սուրան և
Յէկեան Վարժարանէն։

Վարժարանը իսկոյն ամուր հիմերու վրայ գնելու մտադրութեամբ՝ կազմուած է ՀԱՐԱՏԱՐ ՄԱՐՄԻՆ մը, բաղկացած հետեւ լեալ անձերէն. Տիար Հանրի Թախթաճեան՝ իբր ներկայացուցիչ զիտաւոր Բարերար Տիար Յ. Տիարպէքերեանի, Տիար Մ. Շիրիւնեան, Տիար Մուրատ Էօրնէքեան՝ որդին Բարերար Տիար Փանոս Էօրնէքեանի, Իւրեանց իբր Նախագահ ունենալով Միարաւնութեան ներկայացուցիչ Հ. Ստեփան Վրդ. Գերազեանը։

Լրդ. Ֆերահեանը:
Նոր վարժարանին շէնքին գիրքը, ձեւը,

միջավայրը՝ դիւթիչ և աղնուական բնոյթ
մը ունին, շրջապատուած ծաղկաւէտ բու-
րաստաններով ու ծառազարդ պարտէզնե-
րով: Օժտուած է ներքին ու արտաքին ա-
մէնէն արդիական պահանջներով (ներքին
հեռաձայն, բաղնիքներ, կառատուն, ջեր-
մարաչիս):

Այդիւ 22ին կատարուած է մուտքը նոր վարժարանին շէմէն ներս, և բանալիները Հ. Ստեփան Վրդ. Ֆերահեանի ձեռքը յանձնելու պահան, բարերարները արդար հպարտութեամբ նշած են շէնքին գեղեցւած կաթիլները, մաղթելով որ արդիւնաշատ ըլլան Հոն վաստակողներու անխոնջ ջանքերը:

Ինչպէս Մուրատի եւ Ռափայէլի ա-
նունները մշանջնեապէս կապուած են մեր
մշակութային վերածնունդի պատմութեան
հետ, իբրեւ Հիմնադիր Հայրեր ու Մեկե-
նասներ մեր գեղարուեստասէր սերունդին,
եւ անուններ յիշատակելու համար՝ Ար-
փիարին, Վարուժանին, Ալեմշահին, այս-
պէս չենք վարանիր այժմէն տեսնելու հա-
րաւային Ամերիկայի այս նորոյարոյց բա-
րերարներու անձին մէջ՝ ապագայ սերունդ-
ներու փրկութիւնը եւ պանծացումը հայ
գրին ու հայ արժէքներուն։ Հարիւրաւոր,
մանուկներ, որոնց շրթներուն վրայ պիտի
ծաղկին այս նոր բարերարներու անունները,
յաւիտեան երախտագէտ պիտի մնան եւ
վարդի փունջերով կամ յաղթական դափ-
նիններով պիտի պճնեն անոնց ազգաշէն
ճակատները, իբրեւ ռազմիկները վաղ-
ուան հունձքերուն։

Դպրոցական գործունէութիւնը արդա-
րեւ կապուած է մեր մշակոյթի պատմու-

